ՀՏԴ 582.28

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՅՆՈՐԵՆ ՏԱՐԱԾՎԱԾ ՈՒՏԵԼԻ ԲՈՒՅՍԵՐՆ ՈՒ ՍՆԿԵՐԸ

Ս.Գ.Նանագյուլյան, ԵրՊՀ կենսաբանության ֆակուլտետ, բուսաբանության ամբիոնի վարիչ,կ.գ.դոկտոր
Ք.Գ.Ավագյան, ԵրՊՀ բուսաբանության ամբիոն,կ.գ.թ.
Զ.Վ.Պետրոսյան, ԱրՊՀ կենսաբանության ամբիոն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կազմում է Հայկական բարձրավանդակի հյուսիս-արևելյան և Փոքր Կովկասի հարավ-արևելյան մասը: Տարածքի մակերևույթը տիպիկ լեռնային է, ընդգրկում է Սյունիքի կամ Ղարաբաղյան բարձրավանդակի արևելյան շարունակությունը հանդիսացող լեռնաշխարհը: Միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1100 մ: Հարուստ ու բազմազան է Արցախի բուսական աշխարհը: Դա պայմանավորված է ռելիեֆի, հողային ծածկի և կլիմայական պայմանների բազմազանությամբ: Կարևոր դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ Արցախը գտնվում է տարբեր բուսական մարզերի սահմանագլխին: Արցախ-Ղարաբաղի լեռներն անտառածածկ են, որտեղ գերակշռում են հաճարենին, կաղնին, բոխին: Անտառներում տարածված են նաև լորենին, հացենին, թեղին, թխկենին, կենին, վայրի տանձենին, խնձորենին, ընկուզենին և այլ ծառանման տեսակներ: Անտառները և թփուտները գրավում են ընդհանուր տարածքի ավելի քան 30%-ը: Լեռնագագաթները հիմնականում ծածկված են ալպիական գոգդեղով: ԼՂՀ տարածքում հանդիպում են մոտ 2000 տեսակի բարձրակարգ բույսեր, որը կազմում է Կովկասում աճող բուսատեսակների 30,7 %-ը (Ամիրջանյան, Արզումանյան, 1994; Սելքումյան, 1994):

Բուսական ծագում ունեցող սննդի լայնորեն օգտագործումը ԼՂՀ բնակչության կողմից ունի հին պատմություն: Մեր կողմից կատարված վերջին տարիների ուսումնասիրությունները թույլ ավեցին բացահայտել ԼՂՀ տարածքում ուտելի մոտ 100 տեսակի բարձրակարգ բույսեր և 50 տեսակի սնկեր: Ուտելի բույսերը հիմնականում պատկանում են *Rosaceae* – վարդազգիների (մոշ, մասուր, խնձոր, կեռաս, տանձ, սալոր, ալոճ, սերկևիլ, մորի, ազնվամորի, արու և այլն), *Liliaceae* - շուշանազգիների (սոխ, սխտոր, խազեզ, դանձիլ, սատդաշուշան, ծնեբեկ, սնդրուկ, շրեշ և այլն), *Apiaceae* – նեխուրազգիների (սամիթ, գինձ, գազար, կեբեբուկ, շուշանաբանջար, բոխի, իծկոր և այլն), *Brassicaceae* – կաղամբազգիների (կոտեմ, բոդկ, ամսական բոդկ, ջրկոտեմ, հովվամախաղ և այլն), *Chenopodiaceae* – թեղուկազգիների (ապանախ) ընտանիքներին (աղյուսակ 1) [Флора Армении, 1954-2001]:

Վայրի ուտելի բույսերի մեծ մասը վաղ գարնանային տեսակներ են, որոնք հիմնականում օգտագործվում են առանց ջերմային մշակման, թարմ վիճակում, ինչպես օրինակ կնձմնձուկ-կեբեբուկ մոմայինը (*Anthriscus cerefolium*), եղինջը (*Urtica dioica*), խազեզը (*Allium paradoxum*), սինձը (*Tragopogon reticulatus*), ջրկոտենը (*Nasturtium officinale*), բրթնջուկը (Rumex acetoselloides), հովվամախաղը (*Capsella bursa-pastoris*), կակաչը (*Papaver somniferum*), դանձիլը (*Allium victorialis*) և այլն: Եղինջը, հովվամախաղը, սիբեխը (*Falcaria vulgaris*), ասպանախը (*Spinacia tetrandra*), հավակատարը (*Amaranthus retroflexus*), թեղուկը (*Chenopodium albums*), ավելուկը (*Rumex pulcher*), կակաչը, շուշանաբանջարը (*Chacrophyllum bulbosum*), դանդուռը (*Portulaca oleraceae*) օգտագործում են ինչպես թարմ, այնպես էլ տապակած վիճակում:

Վաղ գարնանը հաճախ ուտում են խաղողի (*Vitis vinifera*), մոշի (*Rubus caesius*) մատղաշ, հյութալի, թթվահամ ընձյուղները՝ այսպես կոչված «նաբաթը»: Ուտում են նաև կռատուկի (*Arctium tomentosum*), մարդու կաթնավուշի (*Silibium marianum*), վայրի շաղգամախոտի (*Rapistrum*) մատղաշ ընձյուղները:

Վաղ գարնանային բույս է աստղաշուշանը (*Ornithogalum platyphyllum*), որն օգտագործում են ինչպես խաշած, այնպես էլ թթու դրած: Ապրիլ-մայիս ամիսներին զարգանում են ծնեբեկը (*Asparagus verticillatus*), սնդրուկը (*Polygonatum polyanthemum*), գայլուկը (*Humulus lupulus*), որոնք ուտում են եփած, տապակած վիճակում: Փլփերթը (*Malva neglecta*) օգտագործում են ամբողջ տարվա ընթացքում:

Դրպես թթու համեմունք հաճախ օգտագործվում է բրթնջուկը, նոնի «ախտան» (չոր ոչացած կորիզաման հոտ (*Cornus mas*), սալորի (*Prunus divaricata*) պատեղը, ադյուցած, կարմիր, դեռ չհասունացած մոշը, աղտորը (*Rhus coriaria*), ծորենու պտուղները (*Berberis*) և այլն. Սեր բանակով, որպես թթու համեմունք, օգտագործվում է նռան (*Punica granatum*) հյութը:

Օգտագործում են նաև մշակովի բանջարանոցային խոտաբույսեր՝ սամիթ (*Anethum graveolens*), համեմ (*Coriandrum sativum*), կոտեմ (*Lepidium sativum*), մաղադանոս (*Petroselinum crispum*), սոխ (*Allium cepa*), սխտոր (*Allium sativum*), բողկ (*Raphanus*), ամսական բողկ (Raphanus sativus), գազար (*Daucus carota*), անանուխ (*Mentha longifolia*) և այլն: Բանջարանոցային համեմունքային բույսերի՝ սամիթի, համեմի, նանայի, մաղադանոսի, ռեհանի (*Ocimum basilicum*) հետ միաժամանակ հավաքում և չորացնում են վայրի աճող համեմունքային խոտաբույսեր՝ ուրցի տարբեր տեսակներ «խոռնը» հավաքական անվանմամբ (հիմնականում *Thymus transaucasicus*, *Thymus kotchyanus*), կորթի (*Saturea hortensis*), անանուխ (*Mentha*) և այլն: Միաժամանակ հավաքում են նաև կաթնափուշի հասունացած սերմեր՝ «չաթան», որն օգտագործում են ձմռանը «աղանձ» պատրաստելիս:

Ղարաբաղցիների խոհանոցում առանձնահատուկ տեղ է գրավում տարբեր խոտաբույսերի խառնուրդով կազմված «ժենգյալավ» հացը, որի պատրաստման համար ընդհանուր առմամբ օգտագործվում է 25 և ավելի տեսակների խոտաբույսեր: Հիմնականում դրանք կացարաններին, բնակավայրերին մոտ աճող խոտաբույսեր են: Ընդ որում, խոտաբույսերի համակցությունը խիստ տարբեր է և կախված է բնակավայրի գտնվելու վայրից ու տարվա եղանակից: «Ժենգյալավ» հացի պարտադիր բաղադրամաս են կազմում աստղիկը (*Stellaria media*), կնձմնձուկը, համեմը, սոխը, եղինջը, թրթնջուկը, ավելուկը, հովվամախաղը, պռվապրտը, սիմսիմոկը, նանան, կակաչը, խազեզը, մանուշակը (*Viola odorata*) և այլն: Գարնան սկզբին շատ է օգտագործվում շրեշի (*Eremurus spectabilis*) նորածիլ ցողունը: Գարնան վերջին, երբ բանջարանոցներում արդեն կանաչում են մշակովի բույսերը, ղարաբաղցիները «ժենգյալավ» հացին ավելացնում են նաև սամիթ, ճակնդեղի տերևներ, սպանախ, երբեմն նաև կարտոֆիլի տերևներ: «Ժենգյալավ» հացի պատրաստման յուրահատուկ ձևը նպաստում է կանաչեղենի մեջ պարունակվող վիտամինների և այլ բաղադրամասերի պահպանմանը, իսկ կծու և թթու համերը մեծացնում են նրա ախորժաբերությունը և մարսելիությունը:

Մի շարք խոտաբույսեր Ղարաբաղում օգտագործվում են որպես թեյ: Դրա համար նախընտրում են բուրավետ, լավ ներկող, օրգանիզմի տոնուսը բարձրացնող, ինչպես նաև բուժիչ հատկություններով օժտված բույսեր՝ ուրց, սրոհունդ (*Hypericum*), խնկածաղիկ (*Origanum vulgare*), դանթափար (*Cephalaria gigantea*), նանա, ալոճենու (*Crataegus orientalis*) ծաղիկներ, պտուղներ, ինչպես նաև ճյուղեր, սերկևիլի (*Cydonia oblonga*) ճյուղեր, մասուրի պտուղներ և այլն:

Ամռանը մեծ քանակությամբ օգտագործում են մորու տարբեր տեսակներ (*Fragaria vesca*), մոշ, ազնվամորի (*Rubus idaeus*): Ղարաբաղում լայնորեն տարածված են թթենիները (*Morus alba*):

Աշնանը վայրի աճող բույսերը նույնպես մեծ դեր են խաղում ղարաբաղցու սննդակարգում: Աշնանային պաշարավորումը սկսվում է հոնի և շլորի պաստեղների (լավաշա) պատրաստմամբ: Հոնից պատրաստում են նաև ախտա և չիր: Աղտորի, ծորենու պտուղները հավաքելուց, չորացնելուց, աղալուց և մանրացնելուց հետո օգտագործում են որպես համեմունք: Ի դեպ, օգտագործվում են նաև ծորենու մատղաշ տերևները ևս:

Մեծ քանակությամբ ուտելի բույսեր ենթարկվում են որոշակի մշակման և պահում ձմռան համար՝ Թթուներ պատրաստելու համար բնակչությունը լայնորեն օգտագործում է սնդրուկը, ստեղաշուշանը, պանդուռը, շուշանբանջարը, բոխին (*Hippomarathrum microcarpum*), կերբելուկը (*Anthriscus nemorosa*), ինձկոթը (*Chaerophyllum macrospermum*), կապարը (*Capparis spinosa*), ինչպես նաև սխտորը: Չորացնում են ավելուկ, կաճապ-նվիկ (*Arum maculatum*), լոբի (*Phascolis vulgaris*):

Բացի խոտաբույսերից մեծ քանակությամբ օգտագործում են նաև ծառաբույսերի պտուղներ:

Ոչ մեծ քանակությամբ, առանց որևէ մշակման, հավաքում և օգտագործում են նաև արոսենու (*Sorbus torminalis*), ալոճենու (*Crataegus orientalis*), փռշնու (*Celtis caucasica*), լորենու (*Tilia caucasica*), ունաբի (*Ziziphus vulgaris*), վայրի խաղողի (*Vitis silvestris*), վայրի խնձորի (*Malus orientalis*), վայրի տանձի (*Pyrus sp.*), մոխրատանձի (*Pyrus salicifolia*), զկեռի (*Mespilus germanica*), չիչխանի (*Hippophae rhamnoides*) պտուղներ:

Լեռնային Ղարաբաղում լայն տարածված է մամխին (*Prunus spinosa*), թզենին (*Ficus carica*), սերկևիլենին, նռնենին, փշատենին (*Eleagnus angustifolia*), ընկուզենին (*Juglans regia*), տխիլը (*Corylus avellana*): Ամբողջ տարվա ընթացքում տեղացիները, որպես սննդարար ուտելիք, օգտագործում են ընկույզը: Հանրապետության հարավային գոտում փոքր քանակությամբ

հանդիպում են շագանակի (*Castanea sativa*) ծառեր: ԼՂՀ տարածքում աճող բույսերից մեծ թիվ են կազմում դեղաբույսերը: Ծառանման տեսակների պտուղներից տեղացիները օգտագործում են *Crataegus* (սզնի), *Prunus spinosa, Juglans regia, Corylus avellana* և այլն:

Ինչ վերաբերվում է ուտելի սնկերին, հարկ ենք համարում նշել, որ նրանք լինելով տարբեր կենսացենոզների կարևորագույն բաղադրամաս, յուրահատուկ տեղ են զբաղեցնում բնության բարիքների շարքում:

Սնկերը մեծ դեր են կատարում նաև որպես սննդային և լրացուցիչ կերային սպիտակուցների, տարբեր կենսաբանորեն ակտիվ նյութերի աղբյուր ու լայն կիրառություն գտնում տնտեսության բազմաթիվ բնագավառներում՝ այդ թվում բժշկության և դեղագործության մեջ: Օժտված լինելով գերազանց համային հատկություններով և հարուստ՝ սպիտակուցների պարունակությամբ, գլխարկավոր սնկերի շատ տեսակներ օգտագործվում են սննդի մեջ: Տարբեր երկրներում սննդի մեջ օգտագործվող վայրի աճող սնկերի տեսակային կազմը տարբեր է, կախված տվյալ վայրի բնակչության՝ սնկերի մասին ավանդական գիտելիքներից, էկոլոգիական պայմաններից, կայուն բերքատվությունից, մակրոմիցետների պտղամարմինների չափերից և առատությունից (Наумовлян, 1997):

ԼՂՀ-ի յուրօրինակ բնակլիմայական պայմանները՝ լեռնային ռելիեֆը, բուսականության բազմազանությունը, զգալիորեն ազդել են գլխարկավոր սնկերի բիոտայի տեսակային կազմի վրա: Հանրապետության տարածքը հարուստ է անտառներով, որտեղ տարվա համարյա բոլոր ամիսներին կարելի է հանդիպել մեծ քանակությամբ գլխարկավոր սնկերի, որոնց մեջ որոշակի տեղ են զբաղեցնում ուտելի տեսակները: Դժբախտաբար, բնակչությունը լավ չի ճանաչում այդ սնկերը: Ռ.Ֆ.Հուսեյնովայի (Гусейнова, 1967) աշխատանքում բերվում են տեղեկություններ մի քանի տեսակի ուտելի սնկերի տարածվածության մասին: Դեռ 1940թ. Վ. Ա. Պետրովը (Петров, 1940) նշում էր, որ Լեռնային Ղարաբաղում սնկերը որպես սննդամթերք համարյա չեն օգտագործվում, բացառությամբ *Sparassis ramosus* - ծմկաբափան և (*Psalliota*) *Agaricus campestris* - սոյն տեսակների: Դա կապված է տվյալ տարածքի սնկերի անբավարար ուսումնասիրությամբ, ինչպես նաև նրանով, որ բնակչությունը չի կարողանում տարբերել ուտելի տեսակները թունավորներից:

Վերջին տարիներին, այդ բացը լրացնելու նպատակով, մեր կողմից կատարվում են ԼՂՀ տարածքի մակրոսկոպիկ սնկերի հատուկ հետազոտություններ: Հայտնաբերվել են մոտ 50 տեսակի ուտելի սնկեր, որոնցից տեղացի բնակչությունը առավելապես օգտագործում է *Agaricus arvensis* (Շամպինյոն դաշտային), *Boletus edulis* (Սպիտակ սունկ), *Lepista nuda* (Շարքասունկ մանուշակագույն), *L. personata* (Շարքասունկ մանուշակագույն ոտիկով), *Calocybe gambosa* (Մայիսյան սունկ), *Lactarius deliciosus* (Շեկլիկ), *Morchella esculenta* (Մորկեղ), *Pleurotus ostreatus* (Ականջասունկ սովորական), *Suillus granulatus* (Յուղասունկ հատիկավոր) տեսակները: Նշված տեսակները օգտագործվում են թարմ, թթու և կիսաթթու (մարինադ) վիճակում:

Անկասկած, հետագա հետազոտությունները կընդլայնեն այս ցուցակը և բնակչությունը կկարողանա լայնորեն օգտագործել այդ արժեքավոր սննդամթերքը: Հետազոտված տարածքները աչքի են ընկնում ուտելի բույսերի և սնկերի մեծ բազմազանությամբ, սակայն այդ արժեքավոր ռեսուրսները օգտագործվում են առանց պատշաճ հսկողության:

Հաշվի առնելով, որ հանրապետությունը հարուստ է ընդարձակ բուսական և սնկային ռեսուրսներով և ի նկատի ունենալով դրանց հսկայական արժեքը, անհրաժեշտ է իրականացնել այդ տարածաշրջանի մանրակրկիտ գույքագրում:

Աղյուսակ 1.

Ղարաբաղում տարածված ուտելի բույսերը և սնկերը

Բույսեր			
Լատիներեն	Հայերեն	Տեղական	Ռուսերեն
Ընտանիք՝Apiaceae			
Anethum graveolens	Սամիթ	Սամեթ	Укроп
Anthriscus cerefolium	Կերբելուկ մամատերև	Կնձմնձուկ	Купырь восколистный
Anthriscus nemorosa	Կերբելուկ կաղնուտային	Կինազոխ	Купырь дубравный
Chaerophyllum bulbosum	Շուշան-բանջար սխտակավոր	Շուշան	Бутень луковичный

Ch. macrospermum	Իծկոտ, Շուշան-բանջար խոշորապտուղ	Իծկոտ	Бутень крупноплодный
Coriandrum sativum	Գինձ, Համեմ ցանովի	Կինձ	Кишнец, Кориандр посевной
Daucus carota	Գազար վայրի	Կլեզար	Морковь дикая
Faslcaria vulgaris	Սիբեխ սովորական	Սիբեղ	Резак обыкновенный
Hippomarathrum microcarpum	Բոխի մանրապտուղ	Պեքի	Конский фенхель мелкоплодный
Petroselinum crispum	Մաղադանոս գանգուր	Պետրուշկա	Петрушка курчавая
Ընտանիք՝ Brassicaceae			
Capsella bursa-pastoris	Ծտապաշար Հովվամաղ	Տոպաշար	Пастушья сумка обыкновенная
Lepidium sativum	Կոտեմ	Կիսւեմ	Клоповник посевной, кресс-салат
Nasturtium officinale	Ջրկոտեմ դեղատու	Ճիրիկոտեմ	Жеруха лекарственная
Raphanus	Բողկ	Պեխկ	Редька
R. sativus	Բողկ ամսական	Ռեղիսկա	Редька посевная
Rapistrum	Վայրի շաղգամ	Շախկամ	Репник
Ընտանիք՝ Liliaceae			
Allium cepa	Սոխ սովորական	Սողան	Лук репчатый
A. sativum	Սխտոր	Սխտոր	Чеснок культурный вид
A. paradoxum	Խազեզ, սոխ տարօրինակ	Խազազ	Лук странный
A. victorialis	Ղանձիլ, սոխ հաղթության	Խնձալա	Лук победный, черемша
Eremurus spectabilis	Շրեշ	Շիրիշ	Эремурус представительный
Ornithogalum tempskyanum	Աստղաշուշան Տեմպսկու	Խնջլոզ	Птицемлечник Темпского
Plolygonatum orientale	Սնդրուկ արևելյան	Կոմզուկ	Купена восточная, Соломонова печать
Ընտանիք՝ Lamiaceae			
Mentha sp.	Անանուխ, դաղձ	Նանա	Мята
Ocimum basilicum	Ռեհան մշակովի	Ռեհան	Базилик камфарный
Origanum vulgare	Խնկածաղիկ սովորական	Սվախոտ	Душица обыкновенная
Saturea hortensis	Կոթիմ պարտեզային, ծիթրոն	Ծիթրոյան	Чабер садовый, Сатурея
Thymus transcaucasicus	Ուրց անդրկովկասյան	Խոռն	Тимьян закавказский
Th. kotschyanus	Ուրց Կոչիի	Խոռն	Тимьян Кочи
Ընտանիք՝ Urticaceae			
Urtica dioica	Եղինջ երկտուն	Պենջար	Крапива двудомная
Urtica urens	Եղինջ այրող	Պենջար	Крапива жгучая
Ընտանիք՝ Asteraceae			
Arctium tomentosum	Կռատուկ, կոծոծ բաղիքավոր	Կուրբն	Лопух войлочный
Cousinia macrocephala	Խոզանափուշ խոշորագլուխ	Վլյան	Кузиния крупноголовчатая
Silybum marianum	Կաթնափուշ	Մայրյու դդանձի	Расторопша пятнистая

	բծավոր		
Tragopogon reticulatus	Սինձ ցանցավոր, այծեմորուք	Սինձ, շաքար	Козлобородник сетчатый
Ընտանիք`Violaceae			
Viola odorata	Մանուշակ բուրավետ	Մնեշակ	Фиалка душистая
Ընտանիք`Polygonaceae			
Rumex acetoselloides	Ավելուկ ավելուկանման, թթրնջուկ	Թարթանջուկ	Щавель щавельковидный
Rumex pulcher	Ավելուկ գեղեցիկ	Իվելուկ	Щавель красивый
Rumex crispus	Ավելուկ գանգուր	Շեպ	Щавель курчавый
Ընտանիք`Caryophyllaceae			
Stellaria media	Աստղիկ սովորական	Ճռճռուկ	Звездчатка
Ընտանիք`Papaveraceae			
Papaver somniferum	Կակաչ քնաբեր	Պուտուտկուն	Мак снотворный
Ընտանիք`Chenopodiaceae			
Spinacia tetrandra	Սպանախ	Սպանաղ	Шпинат
Chenopodium album	Թելուկ սպիտակ	Թալ, մոխրաթալ	Марь белая
Ընտանիք`Vitaceae			
Vitis silvestris	Խաղող անտառային	Ղորս	Виноград лесной
Vitis vinifera	Խաղող մշակովի	Խաղող	Виноград культурный
Ընտանիք`Elaeagnaceae			
Elaeagnus angustifolia	Փշատենի նեղատերև	Փշաղե	Лох, Пшат узколистный
Hippophae rhamnoides	Չիչխան դժնիկանման	Լավիրե	Облепиха крушиновая
Ընտանիք`Rosaceae			
Crataegus orientalis	Ալոճենի, սզնի արևելյան	Սեզն	Боярышник восточный
Cydonia oblonga	Սերկևիլ սովորական	Սրկեվիլ	Айва обыкновенная
Fragaria vesca	Ելակ անտառային	Մորե	Земляника лесная
Malus orientalis	Խնձորենի արևելյան	Քալախնձոր, տզանի	Яблоня восточная
Mespilus germanica	Զկեռ սովորական	Զկեռ	Мушмула обыкновенная
Pyrus sp.	Վայրի տանձ	Քարատանձ	Груша лесная
Piyus salicifolia	Տանձ ուռատերև	Մոխրատանձ	
Prunus divaricata	Շլոր, սալոր	Շլոր	Алыча, Слива растопыренная
Prunus spinosa	Մամխի,սալոր փշավոր	Մամուխ, լկոթնե	Терн, Слива колючая
Rosa sp.	Մասուր	Միասուր	Роза, шиповник
Rubus caesius	Մոշենի	Մոշ	Ежевика, ожина
Rubus idaeus	Ազնվամորի	Մոռ	Малина обыкновенная
Sorbus torminalis	Արոսենի, ծռիտանձ	Ծոտանձ	Рябина, Глоговина
Ընտանիք`Malvaceae			
Malva neglecta	Փիփերթ արհամարված	Փարփոտ, փիրփետ	Просвирняк пренебреженный
Ընտանիք`Asparagaceae			
Asparagus verticillatus	Ծնեբեկ օղակավոր, ծնեփակ	Ծնեփակ	Спаржа мутовчатая

Ընտանիք՝Cannabaceae			
Humulus lupulus	Գայլուկ սովորական	Շրմշռուղ	Хмель обыкновенный
Ընտանիք՝Amaranthaceae			
Amaranthus	Հավակատար	Թելուկ, բալ	Щирица
Ընտանիք՝Moraceae			
Ficus carica	Թզենի սովորական	Թուզնե	Инжир. Винная ягода
Morus alba	Թթենի սպիտակ	Թութնե	Шелковица белая
Ընտանիք՝Juglandaceae			
Juglans regia	Ընկուզենի սովորական	Ճուղպուրե	Орех грецкий
Ընտանիք՝Corylaceae			
Corylus avellana	Տխլենի սովորական	Տկողնե, կտողնե	Лещина обыкновенная
Ընտանիք՝Fagaceae			
Castanea sativa	Շագանակ սովորական	Ծմբալոթի	Каштан обыкновенный
Ընտանիք՝Portulacaceae			
Portulaca oleraceae	Դանդուռ սովորական	Տանդռռ	Портулак огородный
Ընտանիք՝Cornaceae			
Cornus mas	Հոն սովորական	Հյուն	Кизил обыкновенный
Ընտանիք՝Anacardiaceae			
Rhus coriaria	Աղտոր դաբաղային	Սմաղ	Сумах дубильный
Ընտանիք՝Berberiaceae			
Berberis sp.	Ծորենի, կծոխտոր	Կծոխտրե	Барбарис
Ընտանիք՝Punicaceae			
Punica granatum	Նռնենի սովորական	Նռոնե	Гранатник
Ընտանիք՝Capparaceae			
Capparis spinosa	Կապար	Կապար	Каперсы
Ընտանիք՝Araceae			
Arum maculatum	Նվիկ բծավոր	Կաճապ	Аронник пятнистый
Ընտանիք՝Fabaceae			
Phaseolus vulgaris	Լոբի սովորական	Լոբի	Фасоль обыкновенная
Ընտանիք՝Rhamnaceae			
Zizyphus vulgaris	Ունաբ սովորական	Ունաբի	Ююба
Ընտանիք՝Hypericaceae			
Hypericum sp.	Սրտհունդ	Զվերաբոյ	Зверобой
Ընտանիք՝Dipsacaceae			
Cephalaria gigantea	Ղանթավար	Ղանթափա	Головчатка гигантская
Ընտանիք՝Ulmaceae			
Celtis caucasica	Փոշնի	Փոշնե	Каркас
Ընտանիք՝Tiliaceae			
Tilia caucasica	Լորենի կովկասյան	Հոլոռնե	Липа кавказская
Սնկեր			
Ընտանիք՝ Agaricaceae			
Agaricus arvensis	Շամպինյոն դաշտային	Շամպինյոն, սոյն, սոնգն	Шампиньон полевой
Ընտանիք՝ Boletaceae			
Boletus edulis	Սպիտակ սունկ	Սոյն, սոնգն	Белый гриб
Ընտանիք՝ Tricholomataceae			

Calocybe gambosa	Մայիսյան սունկ	Վեչխարի տմակ, սոյն, սոնգն	Майский гриб
Ընտանիք՝ Russulaceae			
Lactarius deliciosus	Ծեկլիկ	Սոյն, սոնգն	Рыжик
Ընտանիք՝ Tricholomataceae			
Lepista nuda	Ծարքասունկ մանուշակա գույն	Սոյն, սոնգն	Рядовка фиолетовая
L. personata	Ծարքասունկ մանուշակա գույն ոտիկով	Սոյն, սոնգն	Рядовка фиолетовоногая
Ընտանիք՝ Morchellaceae			
Morchella esculenta	Սորկեղ	Ծմկքափան,սոյն, սոնգն	Сморчок
Ընտանիք՝ Pleurotaceae			
Pleurotus ostreatus	Ականջասունկ սովորական	Սոյն, սոնգն	Вешенка обыкновенная
Ընտանիք՝ Boletaceae			
Suillus granulatus	Յուղասունկ հատիկավոր	Մասլյենոկ, սոյն, սոնգն	Масленок зернистый

Ամփոփում

ԼՂՀ աշխարհագրական դիրքը, ռելիեֆը, կլիման նպաստել են նրա տարածքում կենսաբանական բազմազանության ձևավորմանը: Այստեղ հանդիպում են մոտ 2000 տեսակի բարձրակարգ բույսեր և 100-ից ավելի մակրոսկոպիկ սնկեր, որոնցից հոդվածում նշվում է բնակչության կողմից օգտագործվող մոտ 100 տեսակի բարձրակարգ բույսերի և 9 տեսակի սնկերի մասին: Տրված է նրանց կարգաբանությունը՝ ըստ ընտանիքների, օգտագործումը, լատիներեն, հայերեն (գիտական և բարբառային) և ռուսերեն անվանումները, նշվում նրանց գույքագրման ու պահպանության անհրաժեշտությունը:

Резюме

Географическое месторасположение, рельеф, климат НКР содействовали созданию биологического разнообразия на ее территории. Здесь встречаются около 2000 видов высших растений и более 100 видов макроскопических грибов, из которых в статье отмечается об употребляемых населением около 100 видов высших растений и 9 видов грибов; их систематика по семействам; использование; названия на латинском, русском и армянском языках (научные и разговорные); также о необходимости инвентаризации и охраны биоты НКР.

Գրականություն

1.Ամիրջանյան Թ.Ի., Արզումանյան Վ.Ա., Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն, «Մաշտոց», Ստեփանակերտ, 1994, էջ 32-43:
2.Ավագյան Ք.Գ., Ծածկասերմ բույսերի կարևորագույն ընտանիքները, ԵՊՀ,1989:
3.Կարապետյան Ռ.Ս., Հայաստանում տարածված մոլախոտերի ատլաս, Երևան,1980:
Մելքումյան Ս.Ա. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրություն, «Լույս» պետ.հրատարակչություն, Երևան, 1994, էջ 26-37:
4.Гусейнова Б.Ф., Макромицеты Нагорного Карабаха, Изд., АН Аз.ССР, Баку. 1967. С 11-119.
5.Нанагюлян С.Г., Макромицеты республики Армения (видовая, пространственная и функциональная структура) , Дисс. докт. биол. наук, Ереван, 1997. - 412 с.
6.Петров В.А. Этноботаника Нагорного Карабаха. Баку, 1940. – С. 20-21.
7.Флора Армении под редакцией Тахтаджян,-ТТ. 1-10 , 1954-2001.